

**ՆՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ**

Ուրարտուի պատմության և բանասիրության ուսումնասիրությունը անցած ավելի քան մեկ հարյուրամյակի ընթացքում հսկայական առաջընթաց է ապրել: Համառ աշխատանք է ձեռնարկվել հենց սկզբից հայտնի սեպագիր արձանագրությունների ընթերցումների և մեկնաբանությունների բնագավառում, շարունակվել են հետազոտվել նաև հետազայում աստիճանաբար հայտնաբերված նյութերը: Այդ հետազոտությունների արդյունքները ամփոփվել են անգլիացի արևելագետ Ա.Սեյսի, Վենետիկի Սիիթարյան միաբանությունից Հ.Սանդալյանի, գերմանացի Կ.Ֆ.Լեման-Հաուպտի, վրացի Գ.Ա.Սելիքիշվիլու և ավստրիացի Ֆ.Վ.Քյոնիգի հրատարակած արձանագրությունների դիվաններում:

Հիշյալ դիվաններում և բազում այլ աշխատություններում, ցավոք, հանդիպում են նաև ոչ քիչ, երբեմն էլ բավական կոպիտ, վրիպումներ՝ սեպագիր տեքստերի սխալ ընթերցումներ, անհամոզիչ մեկնաբանություններ, քերականական բնույթի փաստերի բյուր ընկալումներ: Քիչ չեն նաև գրագիրների անճշտությունները: Այդ կարգի մի շարք խեղաթյուրումների ճշգրտումները պարբերաբար ներկայացրել ենք Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում և Եվրոպայի մի քանի հրկրներում հրատարակված հետազոտություններում: Որոշ փաստեր էլ հակիրճ տեղ են գտել ներկայումս հրատարակության պատրաստվող ուրարտական արձանագրությունների մեր նոր դիվանում:

Այս կապակցությամբ հիշարժան է ականավոր արևելագետ ակադեմիկոս Վ.Վ.Ատրոսովի համոզմունքը այն մասին, որ Հիմ Արևելքի պատմաբանը իրավունք չունի անտեսելու ամենաանճշան փաստերն անգամ: Բոլոր տվյալներն էլ, նրա կարծիքով, համահավասար կարևոր են ընդհանուր մեծ պրոբլեմի լուծման համար: Եվ պատահական չէ, որ ակադեմիկոս Գր.Ղափանցյանը նման հարցադրումը իրավամբ համարել է «Հայասան հայերի բնօրրան» կապիտալ աշխատության բնաբան¹:

Առաջարկվող ճշգրտումների ծավալը, սակայն, հնարավորություն չի ըն-
ձեռում հողվածի սահմաններում սպառել ամբողջ նյութը: Դրս համար մենք
նկատի ունենք ընթերցողին մատուցել հատուկ աշխատություն՝ շուրջ 15-20
մամուլի սահմաններում: Ուսաի ստիպված ենք սույն հողվածում առայժմ
ներկայացնել սեպագիր տեքստերի մոր ընթերցումների և մեկնաբանություն-
ների սոսկ մի քանի մամուլներ:

1. Չնկատված AB «ծով» դետերմինատիվը

Ուրարտերեն *sue* «ծով» բառը սեպագրերում հիշատակվում է հաճախ.
Արգիշտի I-ի Խորխտյան տարեգրության և Լճաշենի արձանագրության
մեջ, Ռուսա I-ի Ծովինարի և Քեշիշ-գյուլի, Արգիշտի II-ի Հադիի և Չելերի-բա-
դիի արձանագրություններում, Սարդուրյան տարեգրության և, վերջապես,
Իշպուհինիի ու Սենուայի «Սիերի դռան» պաշտամունքային հայտնի արձա-
նագրության մեջ:

Բացի այդ, ասորեստանյան քազավոր Աշշուրնաժիդպալ II-ի տարեգ-
րության մեջ հանդիպում է ^{md}*sue*, որը Ի.Մ.Դյակոնովը մույնացնում է ուրար-
տերեն *sue*-ի հետ և համարում Արևմտյան Տիգրիսի ակունքը՝ այժմյան Գյու-
ջիքը (հին հայկական Ծովքը)²:

Հետևաբար, ելնելով հիշյալ տվյալներից և հատկապես հաշվի առնելով
այն հանգամանքը, որ ուրարտերեն *sue* բառը արձանագրություններում հի-
շատակվում է Սևանա լճի և ռոտգիչ ջրանցքներ անցկացնելու համար Ռուսա
I-ի և Արգիշտի II-ի ստեղծած արհեստական լճերի կապակցությամբ, մաս-
նագիտական գրականության մեջ վաղուց արտահայտվել է այն կարծիքը,
որ նրա տակ պետք է ենթադրել «լիճ» կամ «ծով» նշանակությունը: Ի դեպ
այդ կարծիքը զգալի չափով ամրապնդվել է այն փաստով, որ ուրարտերեն
sue-ն միաժամանակ մույնացվել է հայերենի «ծով» բառի հետ:

Մյուս կողմից, այլի է զարնում այն հանգամանքը, որ ուրարտական ար-
ձանագրություններում, ցավոք, *sue* -ն սովորաբար հանդես է գալիս առանց
դետերմինատիվի: Այս տեսակետից միակ բացառությունը կազմում է Սիերի
դռան պաշտամունքային արձանագրությունը: Թվում է, թե այդ փաստը կա-
րող էր վերջնականապես լուծել *sue* բառիմաստը: Սակայն այդ դետերմինա-
տիվի անմշան չափով այստեղ տուժած լինելու հանգամանքը ոչ միայն չի
ճշգրտել *sue*-ի նշանակությունը, այլև, ընդհակառակը, տեղիք է տվել լրացու-
ցիչ թյուրիմացությունների:

Նշենք նաև, որ ուրարտական համարյա բոլոր դիվանների հեղինակները,
ինչպես նաև մյուս բոլոր մասնագետները Սիերի դռան *suininaue* բառի հա-
մար միահամուռ առաջարկել են DINGIR «աստված» դետերմինատիվը:

Մակայն, եթե *suininaue*-ն իսկապես նշանակել է «լճեր» կամ «ծովեր», այդ դեպքում ինչ գործ ունի այստեղ DINGIR «աստված» դետերմինատիվը, որը բնականաբար պետք է դրվի միայն դիցանունների և ուրարտերեն «աստված» բառի հետ:

Ի դեպ, Մհերի դռան արձանագրության համապատասխան հատվածի հոգատար ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ DINGIR ընթերցման մեջ պարզապես առկա է քյուրիմացություն հետևյալ պատճառներով: Հետազոտողները նախ այստեղ սխալմամբ նկատել են սոսկ միմյանց հաջորդող երկու հորիզոնական և այնուհետև մեկ ուղղահայաց սեպախումբ: Եվ քանի որ Մհերի դռան արձանագրությունը փորագրված է, այսպես կոչված, ասորեստանյան գրեղաձևով, այսինքն՝ ուղղահայաց սեպերի հորիզոնականների հատումով, ապա հետազոտողները ենթադրել են, թե ուղղահայաց սեպի հատումը երկրորդ հորիզոնականով պարզապես տուժած է, ուստի չի նկատվում տեքստում: Հետևաբար, այդ ձևով իբր ստացվում է DINGIR «աստված» դետերմինատիվը՝ սեպագիր նշանի որոշ տուժումով աջից:

Սակայն ըստ ամենայնի երևում է, որ Մհերի դռան արձանագրության ընթերցողները հարկ եղած չափով ուշադրություն չեն դարձրել այն կարևոր փաստի վրա, որ ա) իրենց նկատած սեպախումբը փորագրված է ոչ թե տողի միջին մասում, այլ վերևի եզրում և բ) նրանց նկատած սեպախմբի հորիզոնական սեպի տակ հստակ պահպանված է ևս մեկ հորիզոնական սեպ: Հետևաբար, այդ ամենից հետո բոլորովին դժվար չէ նկատել, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք AB «ծով» դետերմինատիվի հետ, որը բնականաբար հանդես է գալիս ուրարտերեն հենց *sue* «ծով» բառի հետ: Ինքնին հասկանալի է, որ տվյալ դեպքում պարզապես տուժած է տողի ստորին եզրի սոսկ երկրորդ հորիզոնական սեպը:

Այդ ամենից հետո դժվար չէ նկատել, որ Մհերի դռան արձանագրության նախկին հետազոտողների ենթադրած ուղղահայաց սեպի հատումը հորիզոնականով (որը գոյություն չունի) ամենևին էլ անհրաժեշտ չէ, քանի որ մեզ հետաքրքրող տեքստի իրական AB «ծով» դետերմինատիվը, ի տարբերություն մտացածին DINGIR «աստված» դետերմինատիվի, դրա կարիքը չունի:

Վերը ասվածից հետևում է, որ *sue* ուրարտերեն բառը (համեմատիր հայերենի «ծով»-ը) առաջիկայում պետք է աներկբա թարգմանել որպես «ծով», իսկ ^{AB} *suininaue* DINGIR GUD II UDU^{MES}-ը՝ «ծովերի աստծուն» (մեկ) ցույց երկու ոչխար»³:

2. Չնկատված *asulie* բառը

Ուրարտական թագավոր Մենուայի Բալուի արձանագրությունը (Արածանիի աջ ափին), ինչպես հայտնի է, հասել է մեզ բավական լավ պահպանված վիճակում և, կարելի է ասել, համարյա նույնքան լավ էլ ընթերցվել և

մեկնաբանվել է մասնագետների կողմից⁴: Այդ արձանագրության մեջ ուրարտական դիվաններում և այլ հետազոտություններում սովորաբար չի վերականգնվել ստակ մի ոչ մեծ և ոչ էական եղծված հատված 11-բդ տողում՝ ²⁰¹ Hatina[...] - չի վերջավորությունը և մի դարձյալ ոչ մեծ, բայց արդեն էական եղծում 15-րդ տողի սկզբում [...]sulie բառում:

Հնդվածի սույն բաժնում մեր կողմից ամաջարկվում է հիշյալ արձանագրության 15-րդ տողի սկզբի մասամբ տուժած ոչ մեծ սեպագիր նշանի վերականգնումը, այդպիսով գիտական շրջանառության մեջ դնելով ուրարտական այլ արձանագրություններում բացակայող նոր բստի (ավելի ճիշտ տվյալ բառի միակ հոգնակի ձևի, որը եզակի թվով վաղուց բազմիցս հայտնի է) ընթերցումը և որը աննշան չափով տուժած լինելու պատճառով ավելի քան մեկ հարյուրամյակ վրիպել է հետազոտողների ուշադրությունից:

Ուրարտական արձանագրությունների դիվաններում Բալուի արձանագրության 15-րդ տողի [...] - su - li - e ha - a - u - a - li - ց, տուժած հատվածի ուղղահայաց սեպի հետ միասին, սովորաբար դիտվել է որպես մի ամբողջություն և այդ մտացածին "Suliehauali-ց համարվել է անդրեփրատյան Սելիտեա (այժմյան Մալաթիա) քաղաք-պետության արքայի անունը, քանի որ արձանագրության հաջորդ, 16-րդ սաղում հիշատակվում է նաև վերջինիս արքային (առանց նշելու նրա անունը) հարկատու դարձնելու մասին: Ըստ որում hauali բառը դիտարկվել է որպես արքայական տիտղոս:

Ի դեպ, այդ հարցում շատ ավելի հեռուն է գնացել ավստրիացի ուրարտագետ Ֆ.Վ.Զյոնիզը՝ հիշյալ շինծու Սուլիեխավալին(?) նույնացնելով Սելիդ-Սելիտեայի՝ ասորեսաանյան արձանագրություններում հիշատակվող արքա Սուլումալի հետ, որին նա սխալմամբ համարել է Մալմանասար III-ի ժամանակակիցը⁵: Սակայն նախ՝ նույնիսկ ձևականորեն Սուլումալը ոչ մի ընդհանուր բան չունի կարծեցյալ Սուլիեխավալիի հետ, այնուհետև՝ նա ոչ թե Մալմանասար III-ի (մ.թ.ա. 859-824թթ.) ժամանակակիցն է, այլ շատ ավելի ուշ ժամանակների՝ Թիզլաթպալասար III-ի (մ.թ.ա. 745-727թթ.) և մեզ հասաքքբող Բալուի արձանագրության կազմող Սենուայի թոռան՝ Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) ժամանակակիցը⁶: Հետևաբար, ակներև է, որ ոչ ձևականորեն, և ոչ էլ ժամանակագրորեն հնարավոր չէ նույնացնել "Suliehauali(?) և Սուլումալը:

Սյուս կողմից, բացառված չէ, որ Բալուի արձանագրության մեջ հիշատակված արշավանքը տեղի ունեցած լինի Սենուայի կառավարման վերջում: Սյդ դեպքում Սելիտեա քաղաք-պետության թագավորը կարող էր լինել հենց մեզ հայտնի Խիլարուադան, որը Խորխորյան տարեգրության IV տարվա և Իզդուրի արձանագրության տվյալների համաձայն կառավարել է Արզիշտի I-ի թագավորության սկզբին և նրա հաջորդի՝ Սարդուրի II-ի օրոք:

Հետևաբար, Սենուայի կառավարման վերջից մինչև Սարդուրի II-ի կառավարման սկիզբը ընկած է երկու տասնամյակից մի վտջը ավելի ժամանակամիջոց, որը միանգամայն նորմալ է հին արևելյան արքաների կստա-

վարման համար: Այնպես որ այդ տեսակետից ևս հարկ չկա Մելիտեա երկրի համար Մենուայի թագավորության օրոք նոր կառավարիչ որոնել՝ Աուլիե-խավայի(?) տարօրինակ անվամբ: Նման մոտեցման դեպքում Մելիտայի գահի վրա Խիլարտադային կարող էր փոխարինած լինել հենց Մուլումալը, որի մասին, Սարդուրի II-ի հետ միասին, բնականաբար, հիշատակում են Թիզլաթպալասար III-ի արձանագրությունները:

⁷Šuliehauali ընթերցումը, վերջապես հիմնովին բացատվում է, եթե նկատի ունենանք, որ hauali բառը, նշանակում է «նվաճեց-մրանք», ըստ ամենայնի արտահայտված է ուրարտական բառի բոլոր կանոններով: Այստեղ ha(u)-«նվաճել» անցողիկ բայը հանդես է գալիս անցյալ կատարյալի եզակի 3-րդ -դեմքով՝ օբյեկտային և ցուցիչի հետ միասին, ըստ որում շարադրանքը տեքստում անփոփոխ ընթանում է 3-րդ դեմքով (համեմատելիք uštabe, karuni, kuruni, kuguni, hauni բայերը): Հետևաբար, [...]šulie hauali-ի տակ ենթադրված են ուրարտական թագավորի կողմից նվաճված ինչ-որ [...]šulie-ներ: Եվ պատահական չէ, որ Գ.Ա.Մելիքիշվիլին [...]šulie-ն իրավամբ համարում է Խոզնակի թվի հասարակ գոյական, որը հանդիսանում է օբյեկտ hauali բայի համար:

Անդրադառնալով կրկին մեզ հետաքրքրող մասամբ եղծված սեպագիր տեքստին, ուշադրության արժանի է այն փաստը, որ Բալուի արձանագրության ընդհանուր բովանդակությունը և եղծված ոչ մեծ սեպագիր նշանի մնացորդները, կարծես, համառոտ են հուշում են, որ մեր [...]šulie-ն ուղղակի կապ պետք է ունենա նախորդ, 14-րդ տողի վերջի asuni բայի հետ: Այդ դեպքում ինքնին հասկանալի է, որ 15-րդ տողի սկզբի պահպանված ուղղահայաց երկար սեպը, ամենայն հավանականությամբ, հանդիսանում է a ոչ մեծ նշանի սկիզբը (ուրեմն՝ այստեղ տուժած են սոսկ աջակողմյան մեկը մյուսի վրա ընկած երկու ուղղահայաց կարճ սեպերը): Հանրագումարում ստացվում է a]-su-li-e, որը հանդիսանում է asuni բառի ուրարտական արձանագրություններում առայժմ ամբողջական չվկայված հոգնակի ձևը:

Այս կապակցությամբ, բնականաբար, ինքնին հարց է ծագում, թե ինչ է ներկայացնում իրենից asuni-asuli բառը և ինչ առնչություն ունի այն քննարկվող տեքստի հետ: Այդ հարցի լուծումը ևս, կարծում ենք, անուղղակի ձևով կարող է լույս սփռել մեր ընթերցման հավաստիության աստիճանի վրա:

Ինչպես հայտնի է, Բալուի արձանագրության 14-րդ տողում asuni բառը հիշատակվում է ^{URU}Šebeteria asuni կապակցության մեջ: Իսկ նույն արձանագրության 3-4-րդ ստորերում դրան համագոր է ^{URU}Šebeteria KUR-ni-ն, այսինքն՝ «Շեբետերիա քաղաքի երկիրը»: Դա նշանակում է, որ Շեբետերիան եղել է քաղաք-պետություն: Ելնելով այդ փաստից, Ի.Մ.Դյակոնովը իրավամբ հանգել է այն եզրակացության, որ asuni-ն ըստ էության նույնն է ինչ KUR-ni-ն (ուրարտերեն ^{KUR}ebani-ն), հետևաբար, այդ բառի համար մա առաջարկել է «մարզ» թարգմանությունը⁸:

Մյուս կողմից, միանգամայն ակներև է, որ Բալուի արձանագրության մեջ

արշավանքի արդյունքների ամփափման ժամանակ սահմանազատվում են նվաճված երկրները՝ Մելիանա քաղաք-պիսաթյունից: Այդպիսով Մեմուան կոնկրետացնում է իր արշավանքի արդյունքները. Արածանիի հովտի մոտակա երկրները կամ մարզերը՝ Շերետերիան, Խուզանան և Ծուփանին (պատմական Ծուփքը) նվաճվել են (asulie hauali), իսկ անդրեփրատյան հեռավոր Մելիանայի քաղափորը սոսկ հարկատու է դարձել Ուրարտուին (LUGÁL URU Meliteialhe aldumi mešini pi):

3. Չնկատված sah-ašt(u)- բայը

Այդ բառը հիշատակվում է սոսկ Կարմիր-բլուրի պեղումներում հայտնաբերված կավե սեպագիր ապիկներից մեկում sa-ha-āš-tū-u-ni ձևով: Սակայն հրատարակիչները սխալմամբ այն ընթերցել են իբրև ir-ha-ma-tu-u-ni⁹: Ինչպես երևում է, թյուրիմացությունը պայմանավորված է sa և tū նշանների ոչ ճիշտ ընկալմամբ: Նրանցից sa-ն շվտթվել է ինչ-որ չափով նման ir նշանի հետ, իսկ tū-ը՝ ma-ի հետ:

Սեպագրերի մասնագետներին ակնհայտ է, որ ir նշանի և վերին, և ստորին հորիզոնական սեպերը միաչափ են, այնինչ տվյալ դեպքում սեպագիր սալիկի վրա վերին հորիզոնականը որոշ չափով կարճ է ստորինից: Հետևաբար, ինքնին հասկանալի է, որ այստեղ մենք գործ ունենք ոչ թե ir, այլ sa նշանի հետ:

Ինչ վերաբերում է սխալ ընթերցված ma նշանին, ապա եթե իսկապես այդպես լիներ, այն պետք է բաղկացած լիներ ընդամենը երեք հորիզոնական զուգահեռ և նրանց հաջորդող մեկ ուղղահայաց սեպերից: Այնինչ, այդ նշանը «մի փոքր» այլ բնույթ ունի: Ի դեպ սեպագիր սալիկի վրա, որը կազմված է, այսպես կոչված, ասորեստանյան գրելաձևով, անհրաժեշտության դեպքում ուղղահայաց սեպերը հատվում են հորիզոնականներով: Հենց այդ հատումն էլ անհրաժեշտ է հղել տվյալ դեպքում, քանի որ մեզ հետաքրքրող բայը կազմված է ոչ թե ma, այլ tū նշանով: Սի խոսքով, սեպագիր սալիկի հրատարակիչների կողմից անգզուշորեն անտեսվել է հորիզոնական և ուղղահայաց սեպերի հատման փաստը: Իսկ դա վկայում է ևս երեք հորիզոնական զուգահեռ սեպերի առկայության մասին ոչ միայն ուղղահայաց սեպից առաջ, այլ հետո:

Ի դեպ irhamatuni սխալ ընթերցումը ակնառու է նաև ուրարտական բայաձևերի համեմատությունից, քանի որ վերջիններս սովորաբար բաղկացած են երկհնչյուն կամ եռահնչյուն արմատներից. ha-, at-, ul-, šid-, ušt- և այլն: Իսկ irhamat- բառի համահնչյուն արմատը ոչ մի ընդհանուր բան չունի ուրարտական բայաձևերի հետ:

Ինչ վերաբերում է մեր առաջարկած sahaštuni ընթերցմանը, ապա այստեղ ամեն ինչ օրինաչափ է. sah-ը արմատն է, ašt-ը լրացուցիչ հիմքի հավելումն է, որի ձայնավորը օրինաչափաբե՛ն համընկնում է բայարմատի ձայ-

նավորին, ս-ն անցողական բայերի ցուցիչն է, իսկ ու-ն՝ անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի III դեմքի վերջավորությունը:

Ի դեպ լրացուցիչ հիմքով բարդված բայաբնաւորները բավական մեծ տարածում ունեն ուրարտերենի բառապաշարում. համեմատիր, թերևս, am- և amast-, šid- և šid-išt-, ul- և ul-ušt-, ašh- և ašh-ašt- և այլն: Այստեղ մեզ մնում է սոսկ սովեացնել, որ առայժմ մեզ հայտնի է միայն sah-ašt- լրացուցիչ հիմքով բարդված նոր բայը, այն դեպքում, երբ sah- պարզ արմատով բայ ուրարտերենում դեռևս վկայված չէ¹⁰: Առայժմ հայտնի չէ նաև այդ բայի իմաստը:

4. Չնկատված ¹⁰ŠA. RESI գաղափարագրերի կոմբինացիան

Գաղափարագրերի այս կոմբինացիան «ներքինի» իմաստով վաղուց հայտնի է ուրարտագիտությանը: Այն կրկնակի հիշատակվում է դեռևս Թովրակ-կալեի պեղումներում հայտնաբերված մի սեպագիր սալիկի վրա, ուր ներկայացված է Ռուսախինիի մայրաքաղաքի պալատական անձնակազմը¹¹:

Գաղափարագրերի այդ նույն կոմբինացիան տեղ է գտել նաև հետագայում Կաբմիր-բլուրի պեղումներում հայտնաբերված մի այլ սեպագիր սալիկի վրա, որի համար, սակայն, մասնագետները առաջարկել են ¹⁰a-hu-pa ոչնչով չհիմնավորված ընթերցումը¹²:

Կաբմիր-բլուրի հիշյալ կավե սաղիկի սեպագիր տեքստի մեր մանրագնին ուսումնասիրությունից պարզվել է, որ թյուրիմացության պատճառ է դարձել հրատարակիչների կողմից քննության առարկա գաղափարագրերի կոմբինացիայի ս դետերմինատիվից հետո առկա sa սեպագիր նշանի անգզուշորեն ընկալումը որպես a¹³: Հենց այդ աննշան վրիպումով էլ պայմանավորված է ¹⁰ŠA. RESI «ներքինի» գաղափարագրերի կոմբինացիայի փոխարեն մասնագիտական գրականության մեջ առաջարկված ¹⁰a(?!)-hu-pa սխալ ընթերցումը և ašupa «մարդ» անիմաստ թարգմանությունը:

SUMMARY

The paper deals with several new interpretations in the reading of Urartian cuneiform texts.

1. The unnoticed determinative AB

The Urartian word *šue* often is used in connection with the Lake Sevan and artificial lakes. Hence, it was treated as "lake" or "sea". On the other hand, this treatment was supported further due to its comparison with the Armenian *šov* "sea".

Once in the inscription of the kings Ishpuini and Menua ("Mheri dur") *šue* is used with a determinative which was treated as DINGIR "god", which is incompatible with this word. The thorough analyses of this passage shows that here we deal with the another determinative, namely AB "sea". Correspondingly, the whole passage ^{AB} *šuininaue* DINGIR GUD II UDU^{MEŠ} should be translated as "(One) ox (and) two sheep to the Sea-god".

2. The unnoticed word *asulie*

The line 15 of the Balu inscription of Menuas, occurs in current Corpuses as [...]su-li-e-ha-a-u-a-li, and was usually treated as the name of king of Melitea (modern Malatya) - ^mSuliehauai, which was compared by F.W.König with the Assyrian Sulumal.

The second part of this passage - *hauai* is apparently a verb composed according to the rules of Urartian morphology, the Pret.III sg. from *hau-*. As to *Julie*, here we deal with the Urartian noun *asulie* (sing. *asuni* "province"), the proposed initial sign a of which is preserved as a vertical cuneiform sign in this line.

Hence, the line 15 of Balu has to be treated as follows: *asulie hauai* LUGÁL^{URU} Melitealhe, *alduni mešini pi* "conquered the provinces, (and) the king of Melitealhe put under tribute".

3. New verb *sah-ašt(u)-*

This verb was treated in the literature as *ir-ha-ma-tu-ú-ni*, which resulted from the misreading of two signs - *ir* and *ma*. The proposed reading *sah-ašt(u)-* is composed according to the rules of Urartian verb; for example, *am(u)-* and *am-ašt(u)-*, *ašh-* and *ašh-ašt(u)-*, *ul(a)-* and *ul-ušt(a)-*, *šid(u)-* and *šid-išt(u)-*, etc.

1. Գր.Капанцян, Хайаса - колыбель армян, Ереван, 1947, с.8.
2. И.М.Дзяконов, ВДИ, 1951/2, с.290, прим.66.
3. Մյն մաւիմ տես մաւ Н.В.Арутюнян, Мировая культура. Традиции и современность, М., 1991, сс.125-126.
4. Г.А.Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (ալւնիտունի՝ УКН). 39. F.W.König, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957 (ալւնիտունի՝ Hehl), 25.
5. F.W.König, Hehl, I, S.64, Anm.7.
6. Տես И.М.Дзяконов, ВДИ, 1951, 2, § 44 (лиц.стор, 43).
7. Տես Г.А.Меликишвили, УКН, 39, прим.2.
8. Տես И.М.Дзяконов, Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков, "Переднеазиатский сборник", М., 1961, с.409.
9. И.М.Дзяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, текст 7, лиц.стор., стк.16. Г.А.Меликишвили, ВДИ, 1971, 4, с.275, лиц.стор., стк.16.
10. Մյն մաւիմ տես մաւ N.V.Harouthyounyan, Nouveau lexique dans les tablettes cunéiformes ourartéennes, "Altorientalische Forschungen", Bd.15, 1988, p.119-121.
11. И.М.Дзяконов, УПД, текст 12, лиц.стор, стк.10, обор.стор., стк.2. Г.А.Меликишвили, ВДИ, 1971, 3, с.231, 286, лиц.стор., стк.10, обор.стор., стк.2.
12. И.М.Дзяконов, УПД, текст 7, лиц.стор., стк.12. Г.А.Меликишвили, ВДИ, 1971, 4, с.275, 462, лиц.стор., стк.12.
13. Մյն մաւիմ տես մաւ Н.В.Арутюнян, Биайнили, Ереван, 1970, с.335, прим.105. I.M.Diakonoff and S.M.Kashkai, Geographical Names According to Urartian texts (Répertoire Géographique des Textes Cunéiformes", Band 9), Wiesbaden, 1981, p.XI, n.1.